ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԸ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1921—1925)

Պրոֆ. Ա. Մ. ՀԱԿՈԲՅԱՆ

1920-ական թթ. սկզբին ինչպես ամբողջ սովետական երկրում, այնպես էլ Սովետական Հայաստանում սոցիալիստական շինարարության գլխավոր խնդիրն էր քայքայված ժողովրդական տնտեսության վերականգնումը, 1913 թ. մակարդակին հասնելը։ Այդ դժվարին գործը երկրում սկսվեց նոր տնտեսական քաղաքականության կենսագործումով։ Շեշտելով նոր տնտեսական քաղաքականությանն անցնելու անհրաժեշտությունը, ՌԿ(բ)Կ X համագումարում այդ մասին տված զեկուցման մեջ Վ. Ի. Լենինը նշեց, որ ներկայումս գլխավոր խնդիրը խոշոր արդյունաբերության, խափանված հարյուրավոր գործարանների ու ֆաբրիկաների վերականգնումն է, երկրի տարբեր մասերում ցրված պրոլետարիատի համախմբումը, միաձուլումը։

Կոմունիստական կուսակցությունը գտնում էր, որ նոր տնտեսական քաղաքականությանն անցնելով մենք թույլ ենք տալիս որոշ նահանջ, կապիտալիստական տարրերի որոշ աշխուժացում։ Դրա գլխավոր նպատակն էր ամրապնդել թիկունքը, բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքը, նախապատրաստվել ավելի լայն ճակատով գրոհելու կապիտալիստական տարրերի վրա։

Հայաստանում ժողովրդական տնտեսության վերականգնումն ուներ իր առանձնահատուկ դժվարությունները։ Այստեղ, մասնավորապես, արդյունաբերությունը հիմնովին քայքայված էր։ Նախկինում եղած արդյունաբերական ձեռնարկությունները վերականգնելու համար պետք է կառուցվեին նոր շենքեր, դրվեին մեքենայական նոր սարքավորումներ։ Երկարատև պատերազմների հետևանքով բնակչության զգալի մասը զոհվել էր, սովամահ եղել կամ մահացել համաճարակային հիվանդություններից։ Առանց այդ էլ փոքրաթիվ բանվոր դասակարգի մնացած մասը գնացել էր գյուղ կամ հեռացել Հայաստանի սահմաններից։

Ինչպես հայտնի է, ցարիզմի գաղութային քաղաքականության հետևանքով նախասովետական Հայաստանում արդյունաբերությունը գտնվում էր հետամնաց վիճակում և կրում էր միակողմանի բնույթ՝ չնայած երկրի առատ բնական հարստություններին։ 1913 թ. Հայաստանի ամբողջ արդյունաբերության արտադրանքի տեսակարար կշիռը ժողովրդական տնտեսության մեջ կազմել է 23,9, իսկ 1919 թ.՝ 13,1 տոկոս։ Գյուղատնտեսության տեսակարար կշիռը՝ համապատասխանաբար 76,1 և 86,9 տոկոս[1]։

---

[1] «Социалистическое строительство Армянской ССР (1920—1940 гг.)», Статистический сборник, Ереван, 1940, էջ 10։

Սովետական իշխանության հաստատման ժամանակ Հայաստանում սովից տառապում էին ոչ միայն 200 հազար գաղթականները, մոտ 50 հազար որբերը, այլև տեղի ժողովուրդը։ Չնայած Սովետական Ռուսաստանից ստացված եղբայրական օգնությանը՝ կենսամթերք, դեղորայք և ֆինանսական միջոցներ, հնարավոր չէր կարճ ժամանակամիջոցում հաղթահարել սովը և համաճարակը։ Այդ բոլորին զուգընթաց, Ալեքսանդրապոլում (Լենինական) և նրա գավառում մինչև 1921 թ. ապրիլի 22-ը իրենց վայրագություններն էին շարունակում քեմալական զավթիչները, իսկ Զանգեզուրում մինչև հուլիսի կեսերը՝ դաշնակցականները։

Հրամայական խնդիր էր՝ երկիրը դուրս բերել ծանր վիճակից, ծավալել խաղաղ տնտեսական շինարարություն։ Այդ նպատակով ՀԿ(բ)Կ Կենտկոմը հատուկ կոչ ուղղեց կուսակցության բոլոր անդամներին, բոլոր աշխատավորներին։

Կոմունիստական կուսակցության կողմից առաջադրված խնդիրների կենսագործման համար մղված պայքարում սկսվում է Սովետական Հայաստանի բանվոր դասակարգի համախմբումը, նրա անձնվեր աշխատանքը արդյունաբերության վերականգնման համար։ 1921—1922 թթ. կարգի են բերվում և սկսում են աշխատել Երևանի գինու-կոնյակի «Արարատ» գործարանը, կաշվի մշակման երկու գործարանները։ Եղբայրական օգնության կարգով Սովետական Ռուսաստանից ստացված սարքավորումներով ընդարձակվում է պոլիգրաֆ արդյունաբերությունը։ Սկսվում են Երևանի հիդրոէլեկտրակայանի ընդարձակման և նորի կառուցման նախապատրաստական աշխատանքները։ 1922 թ. Սովետական Ռուսաստանի Իվանո-Վոզնեսենսկ քաղաքի բանվորները որպես նվեր մի ամբողջ տեքստիլ գործարանի սարքավորում են ուղարկում Ալեքսանդրապոլ։ Այստեղ հիմնադրվում է հանրապետության նորաստեղծ արդյունաբերության առաջին ձեռնարկությունը։

Վերականգնվող և նորաստեղծ արդյունաբերության այդ ձեռնարկությունները ղեկավարում էին իրենք՝ բանվորները։ Այսպես, տպագրական տրեստի ղեկավարությունը վստահված էր կադրային բանվոր, 1904 թ. կոմունիստական կուսակցության անդամ Լևոն Յաղուբյանին։ Որպես տպարանի դիրեկտորներ աշխատում էին բանվորներ Սերգո Փարսադանյանը, Մեսրոբ Քեչյանը, Վահրամ Գաբուզյանը (Ալազան), որը հետագայում դարձավ գրող։

Կաշվի վերամշակման արդյունաբերությունը ղեկավարում էին բանվորներ Սողոմոն Քեքլեկյանը՝ որպես Ժողտնտխորհի կաշվի արդյունաբերության բաժնի վարիչ և Ավագ Մելիք-Վարդանյանը՝ որպես կաշվի պետական գործարանների ընդհանուր կառավարիչ։

1921—1922 թթ. Ալավերդու պղնձահանքերը և պղնձաձուլական գործարանը դեռևս գտնվում էին քայքայված վիճակում։ ՀՍՍՀ Ժողտնտխորհի 1921 թ. հունիսի 10-ի որոշումով որոշ գումար է հատկացվում ծծմբաթթվի, պղնձարջասպի, ծծմբաջրի ու կարբիդի արտադրությունը կազմակերպելու համար և սկսվում է դրանց արտադրությունը։ 1922 թ. Ալավերդու գործարանի դիրեկտոր է նշանակվում սովետական Ռուսաստանից Հայաստան եկած լավագույն մասնագետ Արմենակ Սարգսյանը, որը 1926 թ. առաջ է քաշվում Ժողտնտխորհում աշխատելու։ Նրա ղեկավարությամբ և տեղական կուսակցական ու սովետական կազմակերպությունների օգնությամբ Ալավերդում

աստիճանաբար կարգավորվում էին պղնձարդյունաբերության վերականգնման աշխատանքները։ Ղափանում այդ աշխատանքներն սկսվեցին ավելի ուշ։

1921 թ. քաղաքացիական կռիվների ավարտումից հետո Հայաստանում մեծ աշխուժություն է նկատվում արհեստակցական միությունների աշխատանքներում։ Համախմբվելով կոմունիստական կուսակցության շուրջը և մոբիլիզացնելով աշխատավորների ուժերը, նրանք ակտիվորեն մասնակցում էին ժողովրդական տնտեսության վերականգնմանը։ Ճյուղային արհմիություններից շատերը ստեղծվեցին սովետական իշխանության օրոք։ Այդ ժամանակ Հայաստանի գավառներում արդեն կային արհմիութենական բյուրոներ։ 1921 թ. օգոստոսին Հայաստանի արհմիությունների շարքերում կար 16.000 աշխատավոր։ Նույն ամսին Երևանում տեղի է ունենում Հայաստանի արհեստակցական միությունների առաջին համագումարը, որին մասնակցում էին 198 պատգամավոր։ Արհեստակցական և տնտեսական շինարարության վերաբերյալ իր որոշումներով համագումարը նշեց արհմիությունների առաջնահերթ խնդիրները ժողովրդական տնտեսության վերականգնման գործում։ Համագումարից հետո արհմիությունների գործունեությունը նոր թափ ստացավ։ Զգալի աշխատանք կատարվեց նրանց շարքերի աճի ու ամրապնդման, դեպի աշխատանքը կոմունիստական վերաբերմունք դաստիարակելու, աշխատանքային կարգապահությունն ամրապնդելու և այլ բնագավառներում։ Համագումարն ընտրեց Հայաստանի արհեստակցական միությունների խորհուրդ, որի առաջին նախագահն էր Հայկ Ազատյանը։

Հանրապետության ժողովրդական տնտեսության վերականգնման համար մղված պայքարում բանվոր դասակարգի և բոլոր աշխատավորների ուժերի մոբիլիզացման գործում կարևոր նշանակություն ունեցան ՀԿ(բ)Կ I համագումարի (1922 թ. հունվարի 26—29) և Հայկական ՍՍՀ բանվորների, գյուղացիների ու կարմիրբանակայինների դեպուտատների սովետների I համագումարի (1922 թ. հունվարի 30—փետրվարի 4) որոշումները։ ՀԿ(բ)Կ I համագումարը ամփոփեց սովետական իշխանության հաստատման և ամրապնդման, ժողովրդական տնտեսության վերականգնման համար մղված պայքարի առաջին արդյունքները։ Մասնավորապես վերջին հարցի վերաբերյալ Կենտկոմի հաշվետվության մեջ ասված է. «Երկրի տնտեսությունը վերականգնելու գործում մեր կուսակցության ղեկավարությամբ շատ բան է արվել, մենք կարողացել ենք գործի դնել և աշխատեցնել Հայաստանի համարյա բոլոր արդյունաբերական ձեռնարկությունները, սակայն մեր ամբողջ աշխատանքը գլխավորապես կազմակերպչական բնույթ է ունեցել»[2]։ Համագումարը հատկապես ընդգծեց, որ հանրապետության բանվոր դասակարգը և բոլոր աշխատավորները կուսակցության ղեկավարությամբ պետք է շարունակեն անձնվեր աշխատանքը բայրայված տնտեսությունը լիովին վերականգնելու, երկիրը ծանր դրությունից դուրս բերելու համար։ Իսկ դա անհնարին է առանց մյուս սովետական հանրապետությունների հետ սերտ տնտեսական, քաղաքական ու կուլտուրական կապերի, առանց նրանց պետական ուժերի միավորման և եղբայրական համագործակցության։ Ուստի կուսակցությանն առաջնահերթ խնդիրն է, նշեց համագումարը, ավելի ու ավելի ուժեղացնել աշխատավորների ինտերնացիոնալ դաստիարակությունը, ամրապնդել ժողովուրդների բարեկամությունը,

2 «Խորհրդային Հայաստան», 1922, № 23։

անհաշտ պայքար տանել բուրժուական նացիոնալիզմի բոլոր դրսևորումների դեմ։ Համագումարը միաժամանակ ընդգծեց, որ Հայաստանի կոմունիստական կուսակցությունը և բոլոր աշխատավորները լիովին պաշտպանում են Անդրկովկասյան հանրապետությունների՝ Ադրբեջանի, Հայաստանի ու Վրաստանի ֆեդերացիայի և սովետական բոլոր հանրապետությունների պետական միության՝ Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության ստեղծման լենինյան գաղափարները։

Այդ գաղափարների իրականացման համար մղվող պայքարի առաջավոր շարքերում էր բանվոր դասակարգը, որի թվական կազմը գնալով ավելի ու ավելի մեծանում էր կուսակցության շարքերում։ Դրան զգալի չափով նպաստեցին կուսակցության շարքերի պարբերաբար տեղի ունեցող ստուգումներն ու զտումները և հատկապես կուսակցության աճի հարցում բանվորներին տրվող արտոնությունները։ Այսպես, 1922 թ. սկզբին տեղի ունեցած ստուգման և զտման ընթացքում Հայաստանի կոմունիստական կուսակցության շարքերում բանվորների տոկոսը 10,5-ից հասավ 13,6-ի[3]։

Նշելով հանրապետության ժողովրդական տնտեսության, հատկապես արդյունաբերության վերականգնման առաջին հաջողությունները, Հայաստանի սովետների I համագումարը արձանագրեց, որ նոր տնտեսական քաղաքականության կենսագործումով ամրապնդվում է պրոլետարիատի դիկտատուրայի դասակարգային հիմքը՝ բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքը։ Համագումարի ընդունած Հայկական ՍՍՀ առաջին սահմանադրությամբ հաստատվեց, որ ամբողջ իշխանությունը կենտրոնում և տեղերում պատկանում է բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների պատգամավորական խորհուրդներին։ Այդ խորհուրդներում բանվոր դասակարգի ղեկավար դերը ապահովելու նպատակով սահմանադրությամբ նախատեսվեցին ընտրական նորմաներ, որոնք ելակետ ունեին տվյալ ժամանակաշրջանում հանրապետության բնակչության դասակարգային կառուցվածքը։ Ըստ այդ նորմաների, սովետների գավառային համագումարի համար գյուղական վայրերի 1000 բնակչից ընտրվում էր մեկ պատգամավոր, իսկ քաղաքի 200 բնակչից նույնպես մեկ պատգամավոր։ Այդ նորմաները պահպանվեցին մինչև շահագործող դասակարգերի վերացումը և սոցիալիզմի հաղթանակը մեր երկրում և կարևոր դեր կատարեցին պրոլետարիատի դիկտատուրայի ամրապնդման գործում։

Ինչպես հայտնի է, Հայաստանում սովետական իշխանության հաստատման առաջին տարիներին կուսակցական և սովետական ղեկավար աշխատողների մեծ կարիք էր զգացվում թե՛ հանրապետական և թե՛ գավառային ու շրջանային օրգաններում աշխատելու համար։ Այդ պակասը մեծ մասամբ լրացվում էր տեղական կադրերի հաշվին, որոնց մեջ իրենց արժանի տեղն ունեին բանվոր դասակարգի ներկայացուցիչները։ Կոմունիստական կուսակցությունը համարձակորեն ղեկավար աշխատանքի էր առաջ քաշում լավագույն բանվորներին, որոնք թեև ղեկավար աշխատանքի փորձ և հաճախ էլ համապատասխան կրթություն և մասնագիտություն չունեին, բայց իրենց վստահված գործը կատարում էին նվիրվածությամբ ու մեծ եռանդով։ Այդպիսիները շատ էին։ Հիշատակենք նրանցից մի քանիսին։

---

[3] «Известия Кавказского бюро ЦК РКП(б)», № 2, 1922, Тифлис, էջ 21—22։

1904 թ. բոլշևիկների կուսակցության անդամ, Բաքվում իր հեղափոխական կոփվածությունը ստացած բանվոր Ս. Ն. Մարտիկյանը, որը 1919 թ. արդեն գտնվում էր Հայաստանում և ակտիվ կերպով մասնակցել էր սովետական կարգերի հաստատման համար մղված պայքարին, ընտրվում է ՀԿ(բ)Կ Երևանի կոմիտեի քարտուղար։ Նրա ղեկավարությամբ մայրաքաղաքի կոմունիստական կազմակերպությունը զգալի չափով ամրապնդվում է։ Այնուհետև նա աշխատում է որպես Սովետական Հայաստանի Ժողտնտխորհի նախագահ, մեծ ջանքեր գործադրելով հանրապետության արդյունաբերության վերականգնման համար։ 1924 թ. Ս. Ն. Մարտիկյանը նշանակվում է հանրապետության բանվորա-գյուղացիական տեսչության ժողովրդական կոմիսար, բեղմնավոր աշխատանք կատարելով սովետական ապարատի ամրապնդման ուղղությամբ։ Հետագա տարիներին բանվոր հեղափոխական Ս. Ն. Մարտիկյանը ընտրվում է աշխատավորների դեպուտատների Երևանի քաղաքային սովետի նախագահ, ապա՝ ՀՍՍՀ Կենտրոնական գործադիր կոմիտեի նախագահ։ Երկար տարիներ լինելով ՀԿ(բ)Կ Կենտկոմի բյուրոյի, ՍՍՀՄ Կենտգործկոմի և Անդրկովկասյան Ֆեդերացիայի գործադիր կոմիտեի անդամ, Ս. Ն. Մարտիկյանը եռանդուն աշխատանք է կատարել սոցիալիստական շինարարության ծավալման ասպարեզում։

Բանվոր Ն. Հ. Կոստանյանը (բոլշևիկների կուսակցության անդամ 1904 թ.), որը ակտիվորեն մասնակցել էր Զանգեզուրի քաղաքացիական կռիվներին, այնտեղ սովետական կարգեր հաստատվելուց հետո ընտրվում է ՀԿ(բ)Կ Զանգեզուրի գավառային կոմիտեի քարտուղար։ Նա մեծ ջանքեր է գործադրում գավառի կուսակցական և սովետական կազմակերպությունների ամրապնդման, աշխատավորների ուժերի մոբիլիզացման համար ժողովրդական տնտեսությունը վերականգնելու պայքարում։

1905 թ. բոլշևիկների կուսակցության անդամ, բանվոր Ս. Դ. Էվոյանը, որը եղել է Ալավերդու շրջանի հեղկոմի նախագահը, երկար տարիներ ղեկավար աշխատանք է կատարել նույն շրջանում և Երևանում։ Մի քանի անգամ նա ընտրվել է ՀԿ(բ)Կ Կենտրոնական կոմիտեի և Հայկական ՍՍՀ Կենտգործկոմի անդամ։

Գյուղատնտեսության վերականգնման գործում ակտիվ ղեկավար աշխատանք է կատարել Բաքվում իր հեղափոխական կոփվածությունն ստացած, 1917 թ. կոմունիստական կուսակցության անդամ, բանվոր Հ. Ս. Մալյանը։ Զանգեզուրում սովետական իշխանություն հաստատվելուց հետո նա սկզբում աշխատում է որպես Կոնիձորի հեղկոմի նախագահ, իսկ 1923 թ.՝ Դարալագյազի գավառի Փաշալուի շրջանային գործադիր կոմիտեի նախագահ։ Հետագայում շարունակում է վարել մի շարք ղեկավար պաշտոններ։

Ժողովրդական տնտեսության վերականգնման տարիներին՝ 1921—1925 թթ., Սովետական Միությունում կարևոր հաջողություններ էին ձեռք բերվել։ Երկրի արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը իրենց արտադրանքի չափով մոտեցել էին 1913 թ. մակարդակին։ Գյուղատնտեսության ընդհանուր արտադրանքը կազմում էր նախապատերազմյանի 87, իսկ խոշոր արդյունաբերությունը՝ մոտ 75 տոկոսը։ Զգալի հաջողությունների էր հասել Անդրկովկասյան Ֆեդերացիան, որի արդյունաբերության արտադրանքը նույնպես մոտեցել էր նախապատերազմյան մակարդակին, իսկ գյուղատնտեսու-

թյան համախառն արտադրանքը կազմում էր նախապատերազմյան մակարդակի 72,3 տոկոսը[4]։

Որպես կարևոր առանձնահատկություն պետք է նշել, որ Սովետական Հայաստանի արդյունաբերությունը 1921—1925 թթ. չի սահմանափակվել միայն վերականգնումով։ Հնի վերականգնմանը զուգընթաց տեղի է ունեցել արդյունաբերության մի շարք նոր ճյուղերի ստեղծում (տեքստիլ, քիմիական, շինանյութերի և այլն)։ Արդյունաբերության հին ճյուղերի ձեռնարկությունները փաստորեն նոր էին ստեղծվում, քանի որ լիովին քայքայված էին և շարքից դուրս եկած։ Զգացվում էր մեքենայական սարքավորումների մեծ կարիք. Իսկ այն ժամանակ այդպիսիք հեշտ չէր ձեռք բերել։ Այդ ամենը կապված էր ֆինանսական մեծ ծախսերի հետ։ Մյուս կողմից խիստ սակավ էին ինժենեռատեխնիկական և որակյալ բանվորական կադրերը, որոնք պետք է սարքավորեին ու գործի գցեին վերականգնվող կամ նոր կառուցվող ձեռնարկությունները։ Հին կարգերից ժառանգված սովի և տնտեսական քայքայվածության հետևանքով բանվոր դասակարգը ցրիվ էր եկել երկրով մեկ, իր և իր ընտանիքի գոյությունը պահպանելու համար զբաղվում էր գյուղատնտեսությամբ, արհեստավորությամբ և այլ գործերով։ Թեև սովետական իշխանության առաջին իսկ տարիներից սկսված էր բանվոր դասակարգի համախմբումը, բայց այդ տեղի էր ունենում դանդաղ և մեծ դժվարություններով։

Մեծ նշանակություն տալով պղնձարդյունաբերությանը, Հայաստանի կոմունիստական կուսակցությունը և կառավարությունը, սկսած 1924 թ., երբ որոշ չափով բարելավվել էր հանրապետության տնտեսական-ֆինանսական վիճակը, կարևոր միջոցառումներ են ձեռնարկում նրա վերականգնման համար։ Արագորեն սաճում էր բանվորների թիվը և ավելանում պղնձի արտադրանքը։ 1924—1925 տնտեսական տարում պղնձարդյունաբերության մեջ աշխատել է միջին թվով 792 բանվոր, իսկ հաջորդ տնտեսական տարում՝ 2,082[5]։ Այդ տնտեսական տարում պղնձի արտադրանքը կազմում էր հանրապետության արդյունաբերության ընդհանուր արտադրանքի 7,6 տոկոսը (1913 թ. կազմել է 32,2 տոկոսը)[6]։ Պղնձարդյունաբերությունը բռնել էր վերականգնման հաստատ ուղին, որն ավարտվեց հետագա տարիներին։

Պղնձարդյունաբերությունից հետո արդյունաբերության մյուս կարևոր ճյուղն այն ժամանակ գինու-սպիրտի-կոնյակի արտադրությունն էր, որի գլխավոր ձեռնարկությունը Երևանի «Արարատ» գործարանն էր։ Վերականգնման շրջանի վերջում, բացի այդ գործարանից, աշխատում էին նաև Ղամարլուի (Արտաշատի) գինու գործարանը, Դավալուի (Արարատի) գինեգործական բաժանմունքը և մի շարք մանր ձեռնարկություններ։ Արդյունաբերության այս ճյուղի ընդհանուր արտադրանքի արժեքը (նախապատերազմյան գներով) 1924—1925 տնտեսական տարում կազմել է 1913 թ. 55,3 տոկոսը, իսկ բանվորների տարեկան միջին թիվը՝ 57,7 տոկոսը (101 բանվոր)[7]։

Ավարտվել էր կաշվի վերամշակման արդյունաբերության վերականգնումը։ 1924—1925 տնտեսական տարում նրա ընդհանուր արտադրանքը իր ար-

---

4 Տե՛ս Գ. Կ. Օրջոնիկիձե, Ընտիր հոդվածներ և ճառեր, Երևան, 1950, էջ 185։

5 «Հայաստանի ՍԽՀ ժողովրդական տնտեսությունը 1924—1925 և 1925—1926 թթ.», Երևան, 1927, էջ 26։

6 Նույն տեղում, էջ 30։

7 Նույն տեղում, էջ 27։

ժեքային արտահայտությամբ կազմում էր նախապատերազմյան արտադրանքի 99 տոկոսը, իսկ հաջորդ տնտեսական տարում՝ 102 տոկոսը (1913 թ. գներով)[8]։

Բամբակազտման արդյունաբերության վերականգնումը նույնպես ավարտվել էր և նույնիսկ գերազանցվել էր նախապատերազմյան մակարդակը[9]։

1913 թ. համեմատությամբ հանրապետության էլեկտրաէներգիայի արտադրությունը եռապատկվել էր, իսկ պոլիգրաֆ արդյունաբերության արտադրանքը ավելացել էր ավելի քան 10 անգամ, փայտասղոցարանների արտադրանքը՝ 3,5 անգամ։ Արագորեն աճում էին կապիտալ ներդրումները արդյունաբերության մեջ, որոնց խոշոր մասը հատկացվում էր նոր ձեռնարկությունների ստեղծմանը։ Միայն 1924—1925 տնտեսական տարում արդյունաբերության և էներգետիկ տնտեսության բնագավառում կապիտալ ներդրումները կազմել են 2.706 հազար ռուբլի, իսկ հաջորդ տնտեսական տարում՝ 4.051 հազար ռուբլի։

Այդ բոլորի շնորհիվ հանրապետության արդյունաբերության գլխավոր ճյուղերի տեսակարար կշիռը՝ նրանց արտադրանքի արժեքային արտահայտությամբ, 1913 թ. համեմատությամբ 1924—1925 և 1925—1926 տնտեսական տարիներին կրել էր հետևյալ փոփոխությունները (տոկոսներով).

№№	Արդյունաբերության ճյուղը	1913 թ.	1924—1925 տնտեսական տարում	1925—1926 տնտեսական տարում
1	Պղնձի արդյունաբերություն	34,2	7,6	8,0
2	Գինու-սպիրտի-կոնյակի արտադրություն	17,5	16,2	10,8
3	Բամբակազտման արդյունաբերություն	32,5	44,5	45,4
4	Պանրագործարաններ	5,0	9,1	7,6
5	Կաշվի մշակման արդյունաբերություն	4,0	4,5	5,4
6	Պոլիգրաֆ արդյունաբերություն	0,5	4,8	5,9
7	Էլեկտրաէներգիայի արտադրություն	0,4	1,5	1,7
8	Տեքստիլ արդյունաբերություն	—	0,4	3,3
9	Արդյունաբերության մնացած ճյուղերը (սղոցանյութերի, պեմզայի, օճառի արտադրություն և այլն)	5,9	11,4	11,9
		100,0	100,0	100,0[10]

Ինչպես երևում է աղյուսակից, արդյունաբերության ընդհանուր արտադրանքի մեջ, 1913 թ. համեմատությամբ, վերականգնման շրջանի վերջում պղնձարդյունաբերությունը իր տեսակարար կշռով դեռևս հեռու էր նախապատերազմյան մակարդակից, գինու-սպիրտի-կոնյակի արտադրությունը մոտեցել էր այդ մակարդակին, իսկ բամբակի զտման, պոլիգրաֆ, կաշվի մշակ-

8 Նույն տեղում, էջ 26—27։
9 Նույն տեղում։
10 Նույն տեղում, էջ 30։

ման, էլեկտրաէներգիայի և պանրագործարանների արտադրության տեսակարար կշիռը զգալի չափով ավելացել էր։

Հանրապետության խոշոր արդյունաբերության ընդհանուր արտադրանքը 1925—1926 տնտեսական տարում կազմում էր նախապատերազմյան արտադրանքի 74,4 տոկոսը։ Իսկ ամբողջ արդյունաբերության արտադրանքը 1925 թ. կազմում էր նախապատերազմյան արդյունաբերության արտադրանքի 75,5 տոկոսը։

Հաջողությամբ առաջ էր գնում նաև երկաթուղային տրանսպորտի վերականգնումը։

Վերականգնման շրջանի վերջում Հայաստանում սկսվել էր արդյունաբերական մի շարք ձեռնարկությունների շինարարությունը։ Դրանց թվում էին Երևանի կարբիդի, բամբակազտիչ, Լենինականի գործվածքային գործարանները, Երևանի և Լենինականի հիդրոէլեկտրակայանները, շրջանային մի շարք էլեկտրակայաններ և այլն։ Այդ ձեռնարկությունների մի մասը գործարկվեց վերականգնման տարիներին, իսկ մյուս մասը՝ հետագայում։

Արդյունաբերական ձեռնարկությունների շինարարության հետ միասին այդ տարիներին հանրապետությունում սկիզբ է առնում կուլտուր-լուսավորական հաստատությունների և բնակելի շենքերի շինարարությունը։ Դրա շնորհիվ առաջանում է Հայաստանի բանվոր դասակարգի ջոկատներից մեկը՝ շինարարական բանվորությունը, որը ծավալվող շինարարությանը զուգընթաց արագորեն աճում էր։

Հաջողությամբ իրագործվում էր նաև հանրապետության գյուղատնտեսության վերականգնումը։ Այսպես, եթե 1913 թ. Հայաստանի գյուղատնտեսության ամբողջ արտադրանքի արժեքը կազմել է 65,8 միլիոն ռուբլի (1926—1927 թթ. անփոփոխ գներով), ապա 1924—1925 տնտեսական տարում այն կազմում էր 57,06 միլիոն ռուբլի, իսկ 1925—1926 տնտեսական տարում՝ 69,49 միլիոն ռուբլի[11]։

Ամփոփելով հանրապետության ժողովրդական տնտեսության վերականգնման արդյունքները, Հայաստանի կոմունիստական կուսակցության IV համագումարը (1925 թ. դեկտեմբեր) այդ մասին ընդունած բանաձևում նշեց. «Կոմունիստական կուսակցության տնտեսական քաղաքականությունը մեր երկրում առաջ բերեց տնտեսական վերելք։... Ընթացիկ տարում մեր տնտեսությունն ընդհանուր առմամբ ավարտեց իր վերականգնման պրոցեսը»[12]։

Արդյունաբերության վերականգնմանը զուգընթաց, ինչպես ամբողջ Սովետական Միությունում, այնպես էլ Սովետական Հայաստանում համապատասխան քանակական և որակական փոփոխություններ էին տեղի ունեցել նաև բանվոր դասակարգի կազմում։ Հայաստանում բանվոր դասակարգի թվական կազմի ավելացումը արագ տեմպերով սկսեց տեղի ունենալ 1923—1925 թթ.։ Այդ պայմանավորված էր արդյունաբերության վերականգնման աշխատանքների ընդարձակումով և նոր ձեռնարկությունների ու կոմունալ-բը-

11 «Народное хозяйство ССР Армении к концу восстановительного периода», Ереван, 1928, էջ 30—31։

12 Ա. Մ. Հակոբյան, Սովետական Հայաստանը ժողովրդական տնտեսության վերականգնման ժամանակաշրջանում (1921—1925 թթ.), էջ 312։

նակարանային շինարարության ծավալումով։ Այդ աճը ցույց է տրված ստորև բերվող աղյուսակում[13]։

№	Աշխատանքի ճյուղերը և արհեստակցական արտադրական խմբերը	1923 թ. հոկտեմբեր	1924 թ. հոկտեմբեր	1925 թ. հոկտեմբեր
1	Արդյունաբերություն	2816	3724	8718
	Այդ թվում՝			
	հանքագործներ	287	455	1 492
	կաշեգործներ	327	336	413
	մետաղագործներ	72	91	247
	տպագրիչներ	190	256	335
	սննդի-համի	831	1075	1364
	ջուլհակներ	98	135	681
	կարուձևողներ	132	290	205
	կառուցողներ	882	1086	3348
2	Տրանսպորտ-կապ	3570	3733	4620
	այդ թվում՝			
	երկաթուղայիններ	2717	2880	3521
	տեղական փոխադրողներ	543	554	772
	ժողկապ	918	299	327
	Ընդամենը՝	5,533	7,457	13,338

Ինչպես երևում է բերված թվերից, 1923 թ. համեմատությամբ 1925 թ. տեքստիլ արդյունաբերության մեջ բանվորների թիվը ավելացել էր ավելի քան 6,5 անգամ, հանքագործներինը (պղնձարդյունաբերության մեջ աշխատող բանվորներինը)՝ մոտ 5 անգամ, կառուցող բանվորներինը՝ ավելի քան 3,6 անգամ, մետաղագործներինը՝ 3,5 անգամ, տպագրիչ բանվորներինը՝ մոտ 2 անգամ։ Որոշ աճ էր տեղի ունեցել նաև արդյունաբերության այլ ճյուղերի և երկաթուղային տրանսպորտի բանվորների թվական կազմում։ Սակայն ամենից արագ այդ աճը կատարվել էր արդյունաբերության նոր ճյուղում՝ տեքստիլ արդյունաբերության մեջ, ինչպես նաև պղնձարդյունաբերության մեջ և շինարարությունում։

Իսկ ի՞նչ աղբյուրների հաշվին էր կատարվում բանվոր դասակարգի աճը։ Դրանք հիմնականում երեքն էին։ Նախ այն, որ իրենց հին տեղերը՝ վերականգնվող արդյունաբերական ձեռնարկություններն էին վերադառնում նախկինում այդ ձեռնարկություններից հեռացած կադրային բանվորները։ Ճիշտ է, դրանք թվով այնքան էլ շատ չէին, բայց որոշ չափով համալրեցին բանվոր դասակարգի շարքերը և հանդիսացան այն հիմնական կորիզը, որի շուրջը հետագայում համախմբվեցին նորանոր բանվորական կադրեր։ Այդ մասնավորապես վերաբերում է պղնձի, դինու-սպիրտի-կոնյակի, կաշվի, պոլիգրաֆ արդյունաբերությանը և երկաթուղային տրանսպորտին։

13. «Խորհրդային Հայաստանը թվերով», վիճակագրական ժողովածու, Երևան, 1928, էջ 142—143։

Բանվոր դասակարգի շարքերի համալրման մյուս աղբյուրը կարմիր բանակից զորացրված կադրերն էին։ Բանակում ուսուցումն այնպես էր կազմակերպված, որ ռազմական գործին տիրապետելու հետ միասին բանակայիններր սովորում էին գրագիտություն և առանձին մասնագիտություններ։ Զորացրվելով, նրանք ձգտում էին աշխատանքի մտնել արդյունաբերական ձեռնարկություններում և շինարարությունում, ուր համեմատաբար ավելի բարձր աշխատավարձ էին ստանում։ Որակյալ բանվոր դառնալուց հետո նրանց աշխատավարձը ավելի էր բարձրանում։ Մյուս կողմից, աստիճանաբար բարելավվում էին բանվորների կուլտուր-կենցաղային պայմանները։

Բանվոր դասակարգի համալրման երրորդ հիմնական աղբյուրը հանդիսանում էր գյուղը։ Աշխատանք որոնելու համար այդ տարիներին գյուղից զգալի քանակությամբ բնակչություն էր գալիս քաղաք, որի հետևանքով ավելանում էր գործազուրկների թիվը։ Այսպես, 1923 թ. հունվարին Երևանի աշխատանքային բորսայում հաշվի էր առնված 780 գործազուրկ, 1924 թ. հունվարին՝ 5372, 1925 թ. հունվարին՝ 1851, իսկ 1926 թ. հունվարին՝ 4891 գործազուրկ[14]։ Դրանց խոշոր մասը գալիս էր գյուղից և աշխատանքի ուղարկվում արդյունաբերությունում և շինարարությունում։ Այդ տարիներին հանրապետության բանվոր դասակարգի շարքերը համալրվել են նաև որբանոցներում մեծացած երիտասարդների և արտասահմանից ներգաղթածների հաշվին։

Ինչ վերաբերում է ֆաբրիկագործարանային ուսումնարաններին, որոնք արդյունաբերությունը և շինարարությունը մասնագիտական կադրերով համալրելու հիմնական աղբյուրն են, ապա պետք է նշել, որ ժողովրդական տնտեսության վերականգնման տարիներին այդ սիստեմը Հայաստանում դեռ նորնոր էր սկսում ստեղծվել և էական դեր չի խաղացել բանվոր դասակարգի համալրման գործում։

Երևանում առաջին ֆաբրիկագործարանային ուսումնարանը, որ կոչվում էր կենտրոնական դպրոց-արհեստանոց, բացվեց 1923 թ. հունիսին։ Սկզբում նա ուներ փականագործական և ատաղձագործական բաժիններ։ Հետագայում ավելացան նաև դարբնոցային, կոշկակարական, գուլպայագործական բաժինները։ Լենինականում այդպիսի ուսումնարան ստեղծվեց 1924 թ., որը կադրեր էր պատրաստում գլխավորապես տեքստիլ ֆաբրիկայի համար։ Այս հաստատությունները շրջանավարտներ տվեցին միայն հետագա տարիներին։

Որակյալ բանվորական նոր կադրեր պատրաստելու, կամ եղած բանվորների որակը բարձրացնելու նպատակով ուսումնասիրվող ժամանակաշրջանում կազմակերպվում են մշտապես գործող տարբեր տիպի կուրսեր, որոնց ուսումնական ղեկավարությունը իրագործում էր լուսավորության ժողովրդական կոմիսարիատը։ Այսպես, Երևանում կազմակերպվել էին կառուցող բանվորների 9-ամսյա մասնագիտական կուրսեր, ուր սովորում էր 90 բանվոր։ Այդ կուրսերը պատրաստում էին որմնադիրներ, քարտաշներ, բետոնապատման և այլ մասնագետներ։ Նույնքան տևողությամբ գործում էին մետաղագործ բանվորների կուրսերը, որոնք նույնպես մասնագետներ էին պատրաստում շինարարության համար։ Կազմակերպվել էին էլեկտրամոնտյորների կուրսեր, ուր սո-

---

14 «Խորհրդային Հայաստանը թվերով», էջ 154։

վորում էր 50 բանվոր։ Գործում էին նաև տարբեր տիպի դպրոց-արհեստանոցներ (կարողների, կոշկակարների և այլն)[15]։

Բանվորների ընդհանուր կուլտուրական մակարդակը բարձրացնելու համար մեծ խնդիրներ էին դրված բանվորական ֆակուլտետների՝ բանֆակների առջև, որոնք իրենց բնույթով ուսումնական նոր հաստատություններ էին և Սովետական Ռուսաստանում ստեղծվել էին Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունից հետո։ Նրանց գլխավոր նպատակն էր բանվոր ունկընդիրներ պատրաստել բարձրագույն դպրոցների համար, նպաստել բանվորական մտավորականության աճին։

Սովետական Հայաստանում առաջին բանֆակները հիմնվեցին 1923 թ. Երևանում՝ փետրվարին, իսկ Ալեքսանդրապոլում՝ սեպտեմբերին։ Վերականգնման ժամանակաշրջանում նրանց թիվը չաճեց։ Երևանի բանֆակը գործում էր պետական համալսարանին կից և կրում էր բանվոր հեղափոխական Մելիք Մելիքյանի (Դեդուշկա) անունը։ Իսկ Լենինականի բանֆակը կրում էր պրոլետարական գրող Հակոբ Հակոբյանի անունը։ 1924 թ. փետրվարին Երևանի բանֆակում ստեղծվեց նաև ադրբեջանական խմբակ։ Երևանի բանֆակն ուներ հասարակագիտական և տեխնիկական բաժիններ, իսկ Ալեքսանդրապոլինը՝ միայն տեխնիկական։ Բանվորների և աշխատավոր գյուղացիների զավակների մեծ հոսանք էր առաջացել դեպի ուսումնական այդ հաստատությունները, սակայն ընդունելությունը սահմանափակ էր, քանի որ ֆինանսական հնարավորությունները նույնպես սահմանափակ էին։

Հարկ է նշել, որ նոր տիպի ուսումնական այդ հաստատությունները կարևոր դեր կատարեցին բանվորական մտավորականության պատրաստման գործում։ Բանֆակներն ավարտածների խոշոր մասը դարձավ արտադրության և շինարարության կազմակերպիչներ, կուսակցական և պետական գործիչներ, գիտնականներ և մանկավարժներ։ Արդյունաբերության և շինարարության համար միջին որակի կադրեր էին պատրաստում Երևանի և Ալեքսանդրապոլի ինդուստրիալ տեխնիկումները։

Բանվորական կադրերի պատրաստման և վերապատրաստման հիմնական կենտրոններն էին Երևանը և Լենինականը։ Եվ դա հասկանալի է, քանի որ արդյունաբերական ձեռնարկությունները գտնվում էին այդ քաղաքներում, ուր դային նաև որոշ պայմաններ։ Ալավերդում գործում էր միայն մեկ պրոֆտեխնիկական դպրոց 69 սովորողով, իսկ Ղափանում կազմակերպված էին պրոֆկուրսեր՝ 35 սովորողներով։ Նման կուրսեր կային նաև Դիլիջանում և Դարալագյազում։ Իսկ մնացած երեք գավառներում՝ Էջմիածնում, Նոր Բայազետում (Կամո) և Մեղրիում այդպիսի հաստատություններ չկային։ Առանձին գավառներում գործում էին կարճատև կուրսեր, որոնք գյուղատնտեսության համար պատրաստում էին տրակտորիստներ, մեքենավարներ, հողաշինարարներ։

Ինչպես հայտնի է, Վ. Ի. Լենինը բազմիցս նշել է, որ սոցիալիզմի կառուցման համար անհրաժեշտ է բարձրացնել աշխատավորների գրագիտական-կուլտուրական մակարդակը, քանի որ սոցիալիզմը առաջավոր կուլտուրայի, գիտության ու տեխնիկայի հասարակարգ է։ Իսկ Հայաստանի սովետական իշխանությունը այդ բնագավառում նույնպես ծանր ժառանգություն էր ստացել։ Նախասովետական շրջանի միակ մարդահամարի (1897 թ.) տվյալներով Հա-

15 «Խորհրդային Հայաստան, հինգ տարի, 1920—1925», էջ 302։

յաստանի բնակչության (9 տարեկան և բարձր) 91 տոկոսը անգրագետ էր, իսկ կանանց՝ 97 տոկոսը։ Սովետական կարգերի հաստատման ժամանակ այդ թվերի մեջ էական փոփոխություններ տեղի չէին ունեցել։ Գրագիտության միջին տոկոսը 7 տարեկանից բարձր բնակչության մեջ Հանրապետությունում 1922 թ. կազմում էր 21,07 տոկոս։ Քաղաքներում այն կազմում էր 54,68, իսկ գյուղական վայրերում՝ 14,25 տոկոս[16]։ Ահա թե ինչու Հանրապետության աշխատավորների, այդ թվում բանվոր դասակարգի կուլտուրական մակարդակի բարձրացման գործում կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը խոշոր նշանակություն էին տալիս անգրագիտության վերացմանը։

1921 թ. սեպտեմբերի 21-ին Ալ. Մյասնիկյանի ստորագրությամբ հրատարակվում է ՀՍՍՀ ԺողԿոմսովետի դեկրետը Հանրապետությունում անգրագիտության վերացման մասին։ Մեծ աշխատանք ծավալվեց այդ ուղղությամբ։ Մոբիլիզացվեցին բոլոր կարող ուժերը։ Իր սուղ միջոցներից սովետական կառավարությունն անհրաժեշտ հատկացումներ կատարեց այդ նպատակի համար։ Եվ ահա երևացին կատարված աշխատանքի առաջին արդյունքները. 1922—1923 ուսումնական տարում Հայաստանում գործում էր 316 լիկկայան՝ 6403 սովորողներով և 322 ուսուցիչներով, մեկ տարի հետո լիկկայանների թիվը հասել էր 429-ի՝ 8499 սովորողներով, 398 ուսուցիչներով, իսկ 1925—1926 ուսումնական տարում կար 535 լիկկայան՝ 17439 սովորողներով[17]։ Բացի լիկկայաններից, արագ կերպով աճում էին նաև կիսագրագիտության վերացման և երեկոյան դպրոցները։ Այդ ուսումնական տարում նրանցից առաջինների թիվը հասել էր 46-ի՝ 1385 սովորողներով, իսկ երկրորդներինը՝ 4-ի՝ 89 սովորողներով[18]։

Արդյունաբերության վերականգնմանը զուգընթաց աստիճանաբար բարելավվում էին բանվոր դասակարգի նյութական-կենցաղային պայմանները։ Սովետական կառավարությունը հետևողականորեն իրագործում էր լայն սպառման ապրանքների գների սիստեմատիկ իջեցում, բանվոր-ծառայողների ռեալ աշխատավարձի բարձրացում, արդյունաբերական ապրանքների և գյուղատնտեսական մթերքների գների միջև եղած անհամաչափության վերացում, աշխատավորների սոցիալական ապահովության համար հատկացված միջոցների ավելացում, նրանց առողջապահության գործի բարելավում, բնակարանային շինարարության ծավալում և այլն։ 1924 թ. սկզբին Սովետական Միությունում իրագործվեց դրամական ռեֆորմ, որով երկրում հաստատվեց միասնական կայուն դրամ (չերվոնեց)։ Այդ ուղղությամբ առաջին քայլերն սկսվել էին դեռևս 1922 թ.։ Ռեֆորմը նույնպես զգալի չափով նպաստեց բանվորների ռեալ աշխատավարձի բարձրացմանը և կայունացմանը։ 1925 թ. հունվարին Հայաստանում մեկ բանվորի միջին աշխատավարձը կազմում էր 40 ռ. 12 կ., իսկ դեկտեմբերին արդեն հասել էր 44 ռ. 72 կոպեկի[19]։ Արագ կերպով ծավալվում էր բնակարանային շինարարությունը։ 1923—1926 թթ. Հանրապետության քաղաքներում պետության կողմից կառուցվել էին 498 նոր շենքեր, ո-

---

16 Նույն տեղում, էջ LV։
17 Նույն տեղում, էջ 309։
18 Նույն տեղում։
19 «Խորհրդային Հայաստանը թվերով», էջ 160։

ոնցից 371-ը բնակելի՝ 21,910 քառ. մետր ընդհանուր տարածությամբ[20]։ Դրանք հատկացվեցին գլխավորապես բանվորներին և որոշ մասը՝ ծառայողներին։ Նույն ժամանակամիջոցում հանրապետության միայն քաղաքներում կառուցվել էր 3065 անհատական բնակելի շենք՝ 61,575 քառ. մետր ընդհանուր տարածությամբ[21]։ Աշխատավորների համար բնակելի շենքեր էին կառուցում նաև կոոպերատիվ և հասարակական կազմակերպությունները։ Սովետական կառավարությունը խոշոր գումարներ էր ծախսում աշխատավորների առողջության բարելավման համար։ 1923 թ. Ծաղկաձորում կազմակերպվում է հանրապետությունում առաջին հանգստյան տունը, իսկ 1924 թ. սկսում է գործել Դիլիջանի առողջարանը։ Դրանցում հանգստանում և բուժվում էին զգալի թվով բանվորներ։

Նյութական-կենցաղային դրության բարելավման հետ միասին բարձրանում էր բանվոր դասակարգի հասարակական-քաղաքական ակտիվությունը։ Ինչպես ամբողջ Սովետական Միությունում, այնպես էլ Հայաստանում բանվոր դասակարգի լավագույն ներկայացուցիչները առաջ էին քաշվում ղեկավար աշխատանքի կուսակցական, պետական և տնտեսական օրգաններում, արհմիութենական և հասարակական աշխատանքներում։ Վերականգնման ժամանակաշրջանի վերջում Հայաստանում ղեկավար աշխատանք էին կատարում հանրապետության բանվոր դասակարգի բազմաթիվ ներկայացուցիչներ։ Բրենց ակտիվ աշխատանքով նրանք աչքի էին ընկնում աշխատավորների դեպուտատների սովետներում, կոոպերացիայում, հասարակական կազմակերպություններում և մյուս բնագավառներում, մասնավորապես մեծ ակտիվություն էին ցուցաբերում բյուրոկրատիզմի, անտնտեսվարության, չարաշահումների և պետական ու տնտեսական ապարատում տեղ գտած վնասակար այլ երևույթների դեմ մղվող պայքարում։ Դրանով պետք է բացատրել այն, որ բանվորագյուղացիական տեսչության ժողովրդական կոմիսարիատի ապարատի աշխատողների զգալի մասը առաջ քաշված բանվորներ էին, ապարատ, որին հանձնարարված էր կազմակերպել պայքարը նման երևույթների դեմ։

Բանվորների նախաձեռնությամբ այդ տարիներին արդյունաբերական և շինարարական հաստատություններում, երկաթգծում և մյուս տնտեսական օրգաններում ստեղծվեցին առաջին արտադրական խորհրդակցությունները, որոնք լայն ծավալ ստացան հետագայում և մեծ դեր խաղացին աշխատանքի կազմակերպման ու արտադրողականության բարձրացման բնագավառում։

Պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում գյուղին օգնելու, բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքը ամրապնդելու կարևոր ձևերից մեկը քաղաքի կողմից գյուղին ցույց տրվող շեֆական օգնությունն էր, որը Ռուսաստանում կիրառվեց հեղափոխության հաղթանակից հետո և ավելի ձևավորվեց 1920-ական թթ. սկզբին։ Խոսելով այդ մասին, Վ. Ի. Լենինը գրել է. «...Քաղաքի բանվորների և գյուղի աշխատավորների միջև շփում հաստատելը, նրանց միջև ընկերության այն ձևը հաստատելը, որը հեշտությամբ կարելի է ստեղծել նրանց միջև,—այդ մեր պարտականությունն է, այդ մեկն է այն հիմնական խնդիրներից, որ պետք է ունենա իշխանության գլուխ կանգնած բանվոր դասակարգը»[22]։

20 Նույն տեղում, էջ 264։

21 Նույն տեղում։

22 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 33, Երևան, 1952, էջ 553։

Լենինյան ցուցումների հիման վրա քաղաքի կազմակերպություններր, առաջին հերթին Մոսկվայի, Լենինգրադի, Խարկովի և այլ քաղաքների խոշոր արդյունաբերական ձեռնարկությունները ստեղծեցին շեֆական բջիջներ։ Սովետական Հայաստանում առաջին անգամ այդպիսի բջիջներ ստեղծվեցին 1923 թ.՝ Երևանի և Ալեքսանդրապոլի երկաթուղային հանգույցներում, Երևանի «Արարատ», մեխանիկական, կաշվի գործարաններում, տպագրական արհմիությանը կից, քաղաքային ավտոդարաժում, Արտակարգ հանձնաժողովի կոլեկտիվում և մի շարք ժողովրդական կոմիսարիատներում ու հիմնարկներում։ Շեֆական աշխատանքով գյուղին օգնում էին նաև Ալավերդու, Ղազանչի բանվոր-ծառայողների կոլեկտիվները։

Քաղաքի կողմից գյուղին ցույց տրվող շեֆական օգնությունը իրականացվում էր գլխավորապես նյութական միջոցներով և կուլտուր-լուսավորական աշխատանքներով։ Կազմակերպվում էին նաև շաբաթօրյակներ, բանվոր-ծառայողները նվիրատվություններ էին կատարում իրենց աշխատավարձից։ Մոտավոր տվյալներով 1926 թ. սկզբին Հայաստանում գործում էին 33 շեֆական բջիջներ։ Նրանց աշխատանքը ղեկավարում էին կուսակցական ու կոմերիտական կազմակերպությունները։

Մեծ առաջնորդ Վ. Ի. Լենինի մահվան կապակցությամբ սովետական երկրի բանվոր դասակարդի տասնյակ հազարավոր ներկայացուցիչներ դիմումներ ներկայացրին կուսակցության Կենտրոնական կոմիտեին՝ խնդրելով իրենց ընդունել լենինյան կուսակցության շարքերը։ Կենտկոմը ընդառաջեց այդ շարժմանը և հայտարարեց լենինյան կոչ դեպի կուսակցության շարքերը։ Այդ կոչի շնորհիվ Սովետական Միությունում կոմունիստական կուսակցության շարքերը համալրեցին 240 հազար բանվորներ։

Լենինյան կոչի շնորհիվ զգալի չափով ավելացավ նաև Հայաստանի կոմունիստական կուսակցության անդամ-թեկնածուների թիվը, 1924 թ. հունվարին եղած 4.032-ից 1925 թ. հուլիսին հասնելով 6.130-ի[23]։ Ինչպես ցույց են տալիս թվերը, ՀԿ(բ)Կ շարքերը մեկ և կես տարում աճել էին ավելի քան 50՝ տոկոսով, իսկ բանվորների տոկոսը 20,6-ից հասել էր 23,2-ի[24]։

Կոմունիստական կուսակցության և կոմերիտմիության շարքերի աճը ի հաշիվ բանվորների տեղի էր ունեցել ոչ միայն քանակապես, այլև որակապես։ Բանվոր կոմունիստները և կոմերիտականները զգալի չափով աճել էին հասարակական-քաղաքական առումով։ Նրանք ընդգրկված էին քաղաքական ուսուցման տարբեր օղակներում և ուսումնասիրում էին կոմունիստական կուսակցության պատմությունը, Վ. Ի. Լենինի աշխատությունները։ Կուսակցությունը մեծ ուշադրություն էր դարձնում դրա վրա։ Բանվոր կոմունիստ-կոմերիտականների, ինչպես և բոլոր կոմունիստների ու կոմերիտականների քաղաքական կոփվածությունը մեծ չափով նպաստեց կուսակցության անհաշտ պայքարի ուժեղացմանը տրոցկիստների, բուրժուական նացիոնալիստների ու մյուս բոլոր հակալենինյան հոսանքների և ուղղությունների դեմ։ Բանվոր կոմունիստները այդ պայքարի ակտիվ մասնակիցներն էին, առաջամարտիկները։

---

23 «Կոմունիստ» ամսագիր, ՀԿ(բ)Կ Կենտկոմի և Երևանի Գավկոմի օրգան, Երևան, 1925, № 3—4, էջ 11։

24 Նույն տեղում։

Այսպիսով, 1921—1925 թթ. ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ Սովետական Հայաստանում արդյունաբերության վերականգնմանն ու զարգացմանը զուգընթաց տեղի ունեցավ բանվոր դասակարգի՝ հասարակության այդ առաջատար ուժի, թվական ու որակական աճ, նրա շարքերի համախմբում։ Ավելի ու ավելի մեծացավ նրա դերը հասարակության քաղաքական ու տնտեսական կյանքում, սոցիալիստական շինարարության ծավալման գործում։

РАБОЧИЙ КЛАСС СОВЕТСКОЙ АРМЕНИИ В ГОДЫ ВОССТАНОВЛЕНИЯ НАРОДНОГО ХОЗЯЙСТВА (1921—1925)

Проф. А. М. АКОПЯН

(Резюме)

Одной из первоочередных задач восстановления народного хозяйства было восстановление полностью разрушенной промышленности Армении. Благодаря мероприятиям Коммунистической партии и советского правительства, а также героическому труду рабочего класса промышленность республики начинает восстанавливаться, приобретая еще больший размах с 1923 г. Наряду с этим возникают и новые отрасли промышленности. Происходит качественный и количественный рост рабочего класса—передовой силы общества, его консолидация. Возрастает также удельный вес рабочего класса в рядах Компартии Армении. Все более усиливается его роль в политической и экономической жизни республики, в деле строительства социализма.